ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՏԻԿԻՆ ԼԻԼԻԹ ՊԻՊՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Պիպոյան.

Ի պատասխան Ձեր 03.12.2018թ. 01/21Մ գրության՝ տեղեկացվում է.

Հանրապետության հ.37 հասցեում գտնվող «Տաշիր Պիցցա» պիցցաների ցանցի գովազդի տեղադիրի հարցը բազմիցս քննարկվել է և արդյունքում առավել նպատակահարմար է համարվել պատշգամբի տակ թեթև մետաղական կոնստրուկցիայով պատից հեռու տեղադրելու տարբերակը: Շենքի տվյալ հատվածը հանդիսանում է պատմամշակութային հուշարձան-շենք և հաշվի առնելով քարի շարվածքը, պատին անմիջական գովազդի տեղադրումը համարվել է անթույլատրելի: Տվյալ շենքի գործառնական ներկայիս իրավիճակը՝ որպես հասարակական սպասարկման օբյեկտի, նախատեսում է գովազդի առկայություն: Կազմակերպության ներկայացուցչի հետ տեղի ունեցած հեռախոսազրույցի արդյունքում պարզվել է, որ Հանրապետության հ.37 հասցեում գտնվող «Տաշիր Պիցցա» սպասարկման օբյեկտը մոտ երկու-երեք ամսից դադարեցնելու է գործունեությունը՝ ներքին տարածքի վերանորոգման պատճառով, ուստի՝ ձեռք է բերվել պայմանավորվածություն տեղադրված գովազդի վերատեղադրման հնարավորությունը քննարկելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ